



ՈՉ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
ՄԵԱՆ – ՀՐԱԶԴԱՆ ԿԱՍԿԱԴ
ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վերջնական տարբերակ

41134_NTS_Arm
Հոկտեմբեր 2012

DG Consulting Ltd

5 Shevardnadze Street, 0177, Tbilisi, Georgia; Reg No 205 280 998;
Tel: +995 322 997497; +995 599 500 778;
e-mail: dgirgvliani@access.sanet.ge

Ներածություն

Սևան- Հրազդան ՀԷԿերի Կասկադը կառուցվել է 1930-1965 թթ և ներառում է 7 հիդրաէլեկտրակայաններ 565 մՎտ ընդհանուր նոմինալ հզորությամբ: Այն հանդիսանում է Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկ համակարգի որոշիչ դերակատարներից մեկը, որը անխափան և անվտանգ գործելու և նեխկին արտադրական հզորությունների վերականգնման համար ներկայումս զգալի վերանորոգման կարիք ունի: Կասկադը սեփականության իրավունքով պատկանում և շահագործվում է Միջազգային Էներգետիկ Կորպորացիայի /ՄԷԿ/ կողմից:

ՄԷԿ-ը և նրա գլխավոր բաժնետեր Ռուսիայի ՓԲԸ մտադրված են ներդրումներ կատարել կասկադի հիդրոկայանների գոյություն ունեցող ինֆրակառուցվածքի վերականգնման մեջ դրանց տեխնիկական վիճակի, ինչպես նաև էլեկտրաէներգիա արտադրող կայանների տեխնիկական բնութագրերի բարելավման նպատակով: Համակարգը բարելավելու համար ՄԷԿ-ը մշակել է հնգամյա զարգացման/ինվեստիցիոն պլան և սկսել է իրականացնել որոշ աշխատանքներ սեփական ռեսուրսներով: Այնուհետև ընկերությունը դիմել է Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկին (ՎԶԵԲ), ինչպես նաև Ասիական Զարգացման Բանկին (ԱԶԲ) լրացուցիչ վարկային միջոցների ներգրավման նպատակով:

ՎԶԵԲ և ԱԶԲ պահանջում են, որ ներկա Ծրագիրը համապատասխանի Հայաստանի և Եվրոպական Միության օրենսդրական պահանջներին, ինչպես նաև ՎԶԵԲ Ծրագրերի Իրականացման Պահանջներին (ԾԻՊ)¹ և ԱԶԲ համապատասխան բնապահպանական և սոցիալական քաղաքականությանն ու պահանջներին²: ՎԶԵԲ (2008 թ.) ԾԻՊ 1 և ԱԶԲ (2009 թ.) Անվտանգության Քաղաքականության Դրույթներում (ԱՔԴ) Անվտանգության Պահանջներ (ԱՊ) 4 համաձայն գոյություն ունեցող ենթակառուցվածքների և հզորությունների վերականգնման ծրագրերի համար պահանջվում է բնապահպանական և սոցիալական հետազոտություն իրականացնել որոշելու բնապահպանական և սոցիալական ազդեցություններն ու ռիսկերը, ինչպես նաև մշակել բացասական ազդեցությունների և ռիսկերի կանխարգելման և/կամ մեղմացման միջոցառումներ: Հիմք ընդունելով ՎԶԵԲ և ԱԶԲ պահանջները, ինչպես նաև բնապահպանական և սոցիալական հետազոտության արդյունքները մշակվել են Բնապահպանական ու Սոցիալական Գործողությունների Պլանը (ԲՍԳՊ)/ Ուղղիչ Գործողությունների Պլանը, Շահառուների Ներգրավման Պլանը (ՇՆՊ), ինչպես նաև սույն Ոչ-տեխնիկական Ամփոփագիրը:

¹ՎԶԵԲ Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականությունն ու Ծրագրերի Իրականացման Պահանջները (ԾԻՊ) առկա են ՎԶԵԲ հետևյալ վեբ կայքում

<http://www.ebrd.com/downloads/about/sustainability/2008policy.pdf>

² ԱԶԲ համապատասխան քաղաքականություններն են. ԱԶԲ 2009թ. Անվտանգության Քաղաքականության Դրույթները (ԱՔԴ), 2001 թ. Սոցիալական Պաշտպանության Ռազմավարությունը (ՍՊՌ) և 2011 թ. Հանրության հետ Կապերի Քաղաքականությունը (ՀԿՔ), որոնք առկա են հետևյալ կայքում

<http://www.adb.org/about/other-operational-policies-and-strategies>

Նախատեսվող Վերականգնման Ծրագրի նկարագիրը

Սևան- Հրազդան (ՍՀ) ՀԷԿ-րի Կասկադը կառուցվել է 1930-1965 թթ և ներառում է 7 փոքր և միջին հիդրակառուցականներ: Կասկադի զբաղեցրած տարածքը Սևանա լճից մինչև Երևան քաղաք կազմում է երկարությամբ մոտ 70 կմ: 565 մՎտ ընդհանուր նումինալ հզորությամբ: Կասկադն ընդգրկում է 7 ՀԷԿ-եր (Սևան, Հրազդան, Արգել, Արգնի, Քանաքեռ, Երևան-1 և Երևան-2), այդ թվում մի շարք մոտեցնող ջրանցքներ, թունելներ, ակվեդուկներ, ուժային կառույցներ, ջրամբարներ, ենթակայաններ և այլն:

Հիդրոկայանների համակարգը կառուցված է Հրազդան գետի և նրա վտակների վրա: Ոռոգման սեզոնի ընթացքում այն ջուր է վերցնում նույնպես Սևանա լճից: Սևանա լճի ջրի մակարդակը պահպանելու և հսկելու նպատակով, լճից վերցվող ջրի ծավալը յուրաքանչյուր տարի սահմանվում է Կառավարության կողմից ելնելով լճում ջրի ծավալի առկայությունից և ոռոգման պահանջներից: Տարեկան Սևանից բաց թողնվող ջրի ծավալը կազմում է 150 մլն խորանարդ մետր:

Քանի որ գյուղատնտեսությունը համարվում է երկրի տնտեսության զարգացման առաջնայնություն և Սևանա լճում ջրի ծավալները սահմանափակ են, Կասկադի աշխատանքն ամբողջովին կախված է երկրի իրիզացիոն ռազմավարությունից: Կասկադի առաջին երկու ՀԷԿ-րը աշխատում են ամբողջությամբ Սևանից բաց թողնվող ջրով և հետևաբար գործում են միայն ոռոգման սեզոնին: Կասկադի վերջին փուլը (Երևան-3) կառուցված է իրիզացիոն համակարգից դուրս և աշխատում է նաև ոչ իրիզացիոն սեզոնում: Վերջին 4 ՀԷԿ-րը էլեկտրաէներգիա արտադրել ամբողջ տարվա ընթացքում: ՍՀ Կասկադի ընդհանուր տեղակայված հզորությունը 560 մՎտ է, իսկ միջին տարեկան արտադրությունը՝ մոտ 500 մլն կՎտ/ժամ:

Ս-Հ ՀԷԿ-րի Կասկադը ներառում է նաև մի շարք բաց մոտեցնող թունելներ և ջրանցքներ, որոնց միջոցով ջուրը Սևանա լճից տեղափոխվում է դեպի ՀԷԿ-ր: Ջրանցքների մեծ մասը կառուցվել են անցյալ դարի կեսերին և այսօր զգալի չափով քանդված-քայքայված են: Բարոյական մաշվածքի և տեխնիկական վնասվածքների (այդ թվում ապօրենի միացումների) պատճառով ջրանցքները գտնվում են բավականին վատ վիճակում և հիմնովին վերականգնման կարիք ունեն:

Գոյության ամբողջ ընթացքում ՀԷԿ-րը չեն ենթարկվել կապիտալ վերանորոգման: Չնայած ընթացիկ սպասարկման և որոշ համեմատաբար փոքրամաշտաբ վերանորոգման աշխատանքներին, որոնք իրականացվել են անցյալ տասնամյակի ընթացքում, հիդրոտեխնիկական ենթակառուցների մեծամասնությունը, այդ թվում շրջանցիկ ջրատարները հրդրոտեխնիկական հանգույցները և ենթակայանները, գտնվում է աշխատանքային վատ վիճակում, որի պատճառով Կասկադում նկատվում են ջրի մեծ քանակի կորուստներ, հիդրավիլիկական և հզորության (էներգիայի) արտադրության հանգույցներն աշխատում են անկայուն, հաճախակի են խափանումները և հետևաբար ելքային արտադրությունը կրճատվել և հասցվել է նվազագույնի: Իրավիճակը բարելավելու և Ս-Հ Կասկադի անխափան ու անվտանգ աշխատանքն ապահովելու և հզորությունները վերականգնելու նպատակով ՄԷԿ-ը նախատեսում է իրականացնել հետևյալ վերականգնման աշխատանքները.

- Երևան 1 ՀԷԿ-ի վերականգնում- ամբարտակի վերականգնում, տուրբինների փոխարինում, ջրամբարի հողահանման աշխատանքներ (մաքրում- խորացում);

- Սևան, Հրազդան, Արգել, Արզնի, և Քանաքեռ ՀԵԿ-րի էլեկտրական սարքավորումների մեծ մասի (ակումուլյատորների, գեներատորների, զրգռման սարքավորումների, ստատորների) փոխարինում;
- Հրազդան, Արգել և Արզնի ՀԵԿ-րի շրջանցիկ ջրատարների վերականգնում
- Արգել, Հրազդան և Քանաքեռ ՀԵԿ-րի հիդրոտեխնիկական միավորների փոխարինում

Նախատեսվող վերականգնման աշխատանքները վերաբերվելու են ՀԵԿ-րի գոյություն ունեցող կառույցներին, ջրատարներին/ հիդրոտեխնիկական ենթակառույցներին և իրականացվելու են ՀԵԿ-րի սեփականություն հանդիսացող տարածքների սահմաններում: Գոյություն ունեցող ենթակառույցների ընդլայնում չի նախատեսվում:

Օրենսդրական և ինստիտուցիոնալ հիմքեր

ՀՀ օրենսդրության համաձայն Ս-Հ Կասկադի վերականգնման Ծրագիրը շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն չի պահանջում, քանի որ բոլոր աշխատանքները կատարվելու են ՀԵԿ-րի գոյություն ունեցող ենթակառույցների, ջրանցքների/հիդրոտեխնիկական ենթակառույցների և սեփականություն հանդիսացող տարածքների սահմաններում: Վերականգնման աշխատանքները Ս-Հ Կասկադի ՀԵԿ-րի նախկին հզորությունների ընդլայնում չեն նախատեսում (բոլոր կառույցները գործադրվել են մինչև 1995 թվականը), բացառությամբ Երևան -1 ՀԵԿ-ի, որի դեպքում վերականգնման աշխատանքները նաև ջրամբարի մաքրում- խորացում են նախատեսում:

Հայաստանի օրենսդրությունը պաշտոնական Բնապահպանական և Սոցիալական Կառավարման Համակարգ (ԲՄԿՀ) չի պահանջում, սակայն որոշակի պահանջներ ունի տեխնիկական անվտանգության, բնապահպանական թույլտվությունների, մոնիտորինգի և հաշվետվությունների վերաբերյալ: Ընկերությունը պարբերաբար ենթարկվում է պետական էկոլոգիական հսկողության, այդ թվում գետում սանիտարական հոսքի, յուղերով ջրի աղտոտման վիզուալ ստուգումների, թափոնների կառավարման և այլն:

2001 թ. մայիսին Հայաստանը վավերացրել է շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին Կոնվենցիան (Օրհուս 1998թ.), որի նպատակն էր նպաստել բնապահպանական հարցերի շուրջ սովորական քաղաքացիների և Կառավարության և այլ որոշումներ կայացնողների միջև կապերի բարելավմանը: Կոնվենցիայի դրույթներից էլնելով ամրապնդվում է Հայաստանի քաղաքացիների իրավունքը տեղեկացված լինել նախագծի իրականացման հետ կապված բոլոր բնապահպանական խնդիրների վերաբերյալ, իսկ պետական իշխանության կառույցների, տեղական իշխանությունների և հասարակական մարմինների պատասխանատվությունն է՝ այդ բնապահպանական տեղեկատվությունը հասանելի դարձնել բոլորի համար:

Միջազգային օրենսդրության և ՎՁԵԲ ու ԱԶԲ պահանջներից էլնելով, ինչպես նշված է ՎՁԵԲ 2008 թվականի Բնապահպանական և Սոցիալական Քաղաքականության մեջ,

ՎԶԵԲ կողմից ֆինանսավորվող ծրագրերը պետք է համապատասխանեն կայուն զարգացման միջազգային լավագույն փորձին: Այդ հարցում իր հաճախորդներին օգնելու նպատակով Բանկը մշակել է հատուկ Ծրագրերի Իրականացման Պահանջներ (ԾԻՊ) բնապահպանական և սոցիալական խնդիրների և ազդեցությունների այնպիսի կարևոր ոլորտների համար, ինչպիսիք են բնապահպանական և սոցիալական կառավարումը; աշխատուժն ու աշխատանքային պայմանները; աղտոտումների կանխարգելումն ու նվազեցումը/ մեղմացումը; համայնքների բնակչության առողջությունն ու անվտանգությունը; հողամասերի օտարումն ու վերաբնակեցումը; կենսաբազմազանության պահպանումն ու բնական ռեսուրսների կայուն կառավարումը; տեղաբնիկների խնդիրները; մշակութային ժառանգությունը; տեղեկատվության բացահայտումը և շահառուների հետ համագործակցությունը և այլն: Յուրաքանչյուր ԾԻՊ-ում որպես նպատակ սահմանվում են սպասվող արդյունքները, ինչպես նաև այդ արդյունքների նվաճմանը ուղղված հատուկ պահանջները: Բոլոր ԾԻՊ-րի անբաժան մասն է հանդիսանում ազգային օրենքներին համապատասխանության պահանջը: ՎԶԵԲ պահանջում է իր հաճախորդներից, որպիսի ներկայացվող ծրագիրը իր կառուցվածքով համապատասխանի բոլոր ԾԻՊ-րին: ԾԻՊ-րի հիմնական գաղափարն է խուսափել աշխատողների, համայնքների և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններից, իսկ այն դեպքերում երբ դա հնարավոր չէ՝ նվազեցնել, մեղմացնել ազդեցությունները և/կամ փոխհատուցել դրանց դիմաց:

Ինչպես նշված է ԱԶԲ 2009 թվականի Անվտանգության Քաղաքականության Դրույթներում, բնապահպանական և սոցիալական անվտանգության պահանջներն են.

- (1) հնարավորինս խուսափել Ծրագրի բացասական ազդեցություններից շրջակա միջավայրի և մարդկանց վրա;
- (2) նվազագույնի հասցնել կամ մեղմացնել Ծրագրի բացասական ազդեցությունները և/կամ փոխհատուցել դրանց համար այն դեպքերում, երբ խուսափելն անհնարին է;
- (3) օգնել հաճախորդին ուժեղացնել իր անվտանգության համակարգը և զարգացնել բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման հզորությունները:

Հայաստանի, ՎԶԵԲ և ԱԶԲ պահանջներին, ինչպես նաև միջազգային և Եվրոպական Միության լավագույն փորձին համապատասխանելու նպատակով մշակվել է Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլան/ Ուղղիչ Գործողությունների Պլան, որն ուղղված է ՄԷԿ ընկերության գործունեության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների նվազեցմանը և/կամ մեղմացմանը, ինչպես նաև համապատասխան բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգի ներդրմանը:

ՄԷԿ ընկերության բնապահպանական, սոցիալական, առողջապահական և աշխատանքի անվտանգության (ԲՄԱԱ) գործունեությունը

Ներկայումս ընկերությունը չունի պաշտոնական բնապահպանական քաղաքականության հայտարարագիր կամ բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ (ԲՄԿՀ): Համապատասխան բոլոր հարցերը լուծվում են հին ԴՕՇՏ պահանջներից ելնելով (նախկին Խորհրդային Միության ստանդարտների համակարգ), ինչպես նաև Հայաստանի

Հանրապետության օրենսդրության պահանջներից ելնելով և ՀԷԿ-րի ու ենթակայանների գործունեության ուղեցույցների հիման վրա: ՎՋԵԲ և ԱՋԲ պահանջներին համապատասխանելու նպատակով առաջարկվում է մշակել և կիրառել պաշտոնական ԲՄԿ համակարգ: Համակարգը վերաբերվելու է գործունեության ամբողջ պրոցեսին կորպորատիվ մակարդակից մինչև առանձին ենթակառուցվածքներ և կառավարելու է վերականգնման և շինարարական բոլոր աշխատանքները: Առողջության և Աշխատանքի Անվտանգության մասնագիտական Համակարգը ուղղված է լինելու աշխատանքային պրոցեսում նշված խնդիրների բարելավմանը, որի համար կազմակերպվելու են ուսուցանման հատուկ դասընթացներ: Ընկերության գործունեությունը համաձայնեցվելու է ազգային օրենսդրության, Աշխատանքի միջազգային կազմակերպության, ինչպես նաև ՎՋԵԲ և ԱՋԲ պահանջներին և համապատասխանելու է աշխատանքային զբաղվածության ոլորտի բոլոր ընդունված նորմերին: Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանում ներկայացված են կորպորատիվ ԲՄԿ Համակարգի մշակման գործնական առաջարկներ:

Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանում քննարկվում են ընկերության գործունեության տարբեր աշխատանքների հետ կապված աղտոտման հիմնական ռիսկերը, ինչպիսիք են ջրամբարի, տուրբինների, տրանսֆորմատորների, ինչպես նաև օժանդակ ենթակառուցվածքի յուղերի և քսանյութերի, կապարե/ թթվային մարտկոցների, այլ նյութերի և թափոնների կառավարումը: Առաջարկվում են համապատասխան մեղմացման և մոնիտորինգի միջոցառումներ:

Սեվանա լճի պաշտպանության առումով կարելի է համարել, որ ՍԷԿ գործունեությունը և Կասկադի աշխատանքները (այդ թվում նաև սույն Ծրագրով նախատեսվող աշխատանքները), համապատասխանում են ներկայացվող պահանջներին. ձկների պաշտպանիչ համակարգը գործում է պատշաճ և դրա վերանորոգում չի նախատեսվում; Սեվանա լճի գլխամասային կառույցների վերանորոգում նույնպես չի նախատեսվում և հետևաբար ներկա նախագիծը ազդեցություն չի ունենալու Սեվանի վրա:

Որոշակի բնապահպանական ազդեցություն ակնկալվում է Երևան 1 –ի ջրամբարի հողահանման-խորացման աշխատանքներից: Սա չափազանց կարևոր հարց է, քանի որ կարող է վնասվել Երևան 1-ի պատվարից ստորև գտնվող կենսաբանական միջավայրը: Այս հարցը մանրամասն ուսումնասիրվելու է ՇՄԱԳ գործընթացում, որն իրականացվելու է ջրամբարի հողահանման-խորացման աշխատանքների համար: Ենթադրվում է, որ ջրամբարի հողահանման-խորացման աշխատանքներն իրականացնելիս ընկերությունը կիրառելու է ստորին հոսքում ջրի որակի վատթարացումը նվազագույնի հասցնող արդյունավետ միջոցներ: ՇՄԱԳ-ում պետք է հստակ նշված լինեն գետի հունում կատարվող աշխատանքների ինժեներական լուծումները:

Ընկերության գործունեության հետ կապված ռիսկերի թվում պետք է պարտադիր ընդգրկված լինեն գետի վարարման ընթացքում պատվարից ստորև հնարավոր ջրհեղեղները, ինչպես նաև կայանային շենքի ջրածածկումը և դրա հետ կապված ջրահեռացման անհրաժեշտությունը: Ջրհեղեղները կարող են նաև շրջանցիկ ջրատարների համակարգի խափանման արդյունք լինել: Ջրհեղեղման ռիսկը հիմնականում սպառնում է հիդրոկայանների համակարգի հարևանությամբ գտնվող բնակավայրերի բնակչությանը, ինչպես նաև գետի հունին անմիջականորեն մոտ գտնվող

այլ ինժեներական ենթակառույցներին: Քանի որ ջրհեղեղների ժամանակ համայնքները վտանգվում են, դրանց անվտանգությունն ապահովելու նպատակով ԲՄԳՊ-ում անդրադարձել է այդ հարցին Արտակարգ Իրավիճակների Արձագանքման Պլանի մշակման պահանջով:

Ենթադրվում է, որ սարքավորումների և նյութերի բեռնափոխադրումների հետ կապված բացասական սոցիալական- տնտեսական ազդեցությունները ունենալու են կարճատև և տեղական բնույթ: Բոլոր հնարավոր բացասական ազդեցություններն ու ռիսկերը կարող են կանխարգելվել և նվազագույնի հասցվել համայնքների բնակչության համար մշակված առողջապահական և անվտանգության միջոցառումների իրականացման միջոցով, մասնավորապես ցանկապատերի, կամուրջների կառուցման, փոշու տարածման կանխարգելման միջոցառումների, գյուղամիջյան ճանապարհների սպասարկման միջոցով և այլն: Այդպիսի ազդեցություններին ու ռիսկերին անհրաժեշտ անդրադարձ է կատարվել ԲՄԳՊ-ում համապատասխան գործողությունների և մեղմացման միջոցառումների առաջարկների տեսքով:

Արտաքին սոցիալական գործունեություն և կառավարում

Ծրագրի իրականացման, ինչպես նաև հետագա գործունեության ընթացքում ՄԷԿ ընկերության արտաքին սոցիալական գործունեությունը վերաբերվելու է ազդակիր համայնքների առողջությանն ու անվտանգությանը, արտակարգ իրավիճակներին պատրաստվածությանն ու արձագանքման ունակությանը, սոցիալապես խոցելի խմբերի վրա ազդեցության կառավարմանը, մշակութային ժառանգության վրա ազդեցության կառավարմանը, շահառուների հետ հանդիպումներին ու ներգրավմանը, տեղեկատվության հասանելիությանն ու բողոքարկման մեխանիզմին:

Հիմք ընդունելով ԵՄ լավագույն փորձը, ՎԶԵԲ ԾԻՊ1, ինչպես նաև ԱԶԲ ՍՊՌ ԱՊ1, մշակվելու է Արտակարգ Իրավիճակների Արձագանքման Պլան որպես Բնապահպանական Կառավարման Համակարգի բաղկացուցիչ մասը, հատկապես էներգիայի արտադրության և փոխադրման արտադրական և ենթակառուցվածքային կառույցների համար: Արտակարգ Իրավիճակների Արձագանքման Պլանը մշակվելու է ԲՄԳՊ-ի կազմում Ս-Հ Կասկադի վերականգնման աշխատանքների ընթացքում տեղական համայնքներում հնարավոր պատահարներից խուսափելու կամ մեղմացնելու նպատակով:

Հաշվի առնելով, որ Ծրագրի իրականացման ընթացքում բոլոր աշխատանքները պլանավորված են գոյություն ունեցող ենթակառույցների շրջանակներում և Ս-Հ Կասկադի հզորությունները չեն ընդլայնվելու, վերականգնման աշխատանքների ընթացքում լրացուցիչ հողատարածքների ներգրավում և հետևաբար վերաբնակեցում կամ տեղահանում չի նախատեսվում: Այդ իսկ պատճառով շինարարական աշխատանքների և հետագա գործունեության ընթացքում սոցիալապես խոցելի խմբերի, այդ թվում տեղաբնիկների վրա զգալի ազդեցություն չի սկսնկալվում:

Համաձայն նախնական աշխատանքային շրջանակի վերականգնման աշխատանքները կազմակերպվելու և իրականացվելու են ՀԷԿ-րի տարածքում և վերականգնված ջրատարների և ջրամբարների օտարման գոտու սահմաններում, հիմնականում վերգետնյա կամ ՀԷԿ-րի գոյություն ունեցող շինությունների ներսում: Ենթակառուցվածքների վերականգնման աշխատանքները կազմակերպվելու և իրականացվելու են ջրատարների և ջրամբարների սահմաններում և դրանց օտարման գոտիների շրջանակներում որոնք նույնպես պատկանում են ՀԷԿ-րին: Ենթադրվում է, որ առաջարկվող աշխատանքները մշակութային ժառանգության վրա նույնպես ազդեցություն չեն ունենալու: Այնուամենայնիվ կապալառուների և աշխատանքի դեկավարների համար մշակված է Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանի մասը կազմող պատահական հայտնաբերումների արարողագրը:

ՄԷԿ ընկերության համար Ծրագրի շահառուների ներգրավման և հասարակության հետ կապերի ընթացակարգն ուսումնասիրվել է ՎԶԵԲ ԾԻՊ10 և ԱԶԲ 2011 թվականի Հանրության հետ կապերի Քաղաքականության պահանջները հաշվի առնելով: Ս-Հ Կասկադի վերականգնման Ծրագրի համար մշակվել է Շահառուների Ներգրավման Պլանը, որն ընդգրկում է նաև Բողոքարկման մեխանիզմը:

ԲՍԳՊ պահանջների ամփոփում

Բնապահպանական և սոցիալական հետազոտության հիման վրա մշակվել է Սևան-Հրազդան Կասկադի Վերականգնման Նախագծի Բնապահպանական և Սոցիալական Գործողությունների Պլանը: ԲՍԳՊ-ը ներառում է մի շարք միջոցառումներ, որոնք պետք է նախաձեռնվեն Միջազգային Էներգետիկ Կորպորացիայի կողմից Ս-Հ Կասկադի ՀԷԿ-րի կառույցների, գույքի և ենթակառուցվածքների վերականգնման և հետագա աշխատանքի ընթացքում հնարավոր բնապահպանական, առողջապահական և աշխատանքի անվտանգության, ինչպես նաև սոցիալական բացասական ազդեցությունների կանխարգելման, նվազեցման, հսկողության և մեղմացման կամ դրանց դիմաց փոխհատուցման ուղղությամբ:

Յուրաքանչյուր միջոցառման վերաբերյալ ՄԷԿ-ը պարբերաբար հաշվետու է լինելու ՎԶԵԲ-ին և ԱԶԲ-ին ներկայացնելով բնապահպանական, սոցիալական, առողջապահական և աշխատանքի անվտանգության իրավիճակի մասին հաշվետվություններ:

Առաջարկվող ԲՍԳՊ ընդգրկում է հետևյալ հարցերի բնապահպանական կառավարման պլանավորումը, մեղմացման միջոցառումները և մոնիտորինգը

Մաս 1. Վերականգնման աշխատանքների ծրագրային գործողություններ

- Երևան 1 ՀԷԿ-ի ջրամբարի հողահանում-խորացում
- Շրջանցիկ ջրատարների և թունելների վերականգնում
- Էներգետիկ համակարգերի և ենթակայանների նորացում

Մաս2. Ընկերության ընդհանուր բնապահպանական և սոցիալական կառավարման բարելավումը

- Բնապահպանական և սոցիալական համակարգի սխեմայի մշակում
- Ընկերության բնապահպանական և սոցիալական քաղաքականության փաստաթղթի մշակում
- Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանի մշակում
- Բնապահպանական, սոցիալական, առողջության և աշխատանքի անվտանգության հարցերի պատասխանատու անձանց նշանակում և ուսուցանում
- Արտակարգ իրավիճակների արձագանքման պլանի մշակում
- Անհրաժեշտ թույլտվությունների ձեռքբերման գործընթացի ավարտում
- Աղտոտումների կանխարգելման պլանի, յուղերի կառավարման պլանի և թափոնների կառավարման պլանի մշակում և իրականացում
- Առողջապահական և աշխատանքի անվտանգության համակարգի ներդնում
- Շահառուների ներգրավման պլանի, այդ թվում բողոքարկման մեխանիզմի մշակում
-

Մաս 3. Նախագծի մոնիտորինգ և հաշվետվությունների ներկայացում

- Բնապահպանական մոնիտորինգի համակարգի ներդնում;
- Առողջապահական և աշխատանքի անվտանգության մոնիտորինգի համակարգի ներդնում;
- Մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացում: